



ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ

Վիեննա, 29 Դեկտեմբերի 1890:

Ամուռյս մէջ արտաքին քաղաքակա-
նութեան վրայ ազդեցութիւն ունեցող
Նշանատու դէպքեր չպատահեցան, որով
եւ տէրութիւնը ներքին բարեկարգութեան
խնդիրներով զբաղած էին մեծաւ մա-
սամբ: Մասը դէպքերէն յիշուելու է Ան-
գղիոյ եւ Փորթուկալի Արքիէպի մէջ ունե-
ցած անվերջանալի գծտութիւնն, որով
300էն աւելի Փորթուկալցիք զինու զօրու-
թեամբ զրաւեցին անգղիական Ընկերու-
թեան պաշտպանութեան ներքեւ գտնու-
ած երկրէն մաս մը, ըայց ասոր փո-
խարէն Անգղիացիք ալ ուրիշ աղօթի գի-
նաթափ ըրին Փորթուկալցիները: Սպա-
նիացիք որ կոտոր ըռնուած էին Կարոլի-
նեան կղզեաց ընակաց հետ, յաջողեցան
ծակատով մը խաղաղցընել երկիրը: Նա-
եւ Միացեալ-Նահանգաց մէջ ամերիկեան
ընկի ցեղերէն ոմանք ընդհանուսներ ու-
նեցան սպիտակամորթներու հետ:

Գերմանիոյ մէջ, որուն ըլլոր մտա-
դրութիւնը զրաւած էր Քոխի դեղը, մեծ
խնդրոյ նիւթ եղած է այժմ՝ դարբոցական
նոր փոփոխութիւնն, որուն պաշտպան
հանդիսացաւ նոյն իսկ կայսրը ծառով մը:
Այս օրինաց նպատակն է յոյն եւ լատին
լեզուաց եւ հնութեան ուսման չափազանց
աճման առջեւ առնուլ, եւ աւելի գործ-
նական եւ զինուորական կրթութիւն տալ
սորոց:

Անգղիոյ Իրլանտացի երեսփոխա-
նաց մէջ մեծ գտնութիւն ծագեցաւ, որոնց
առաջնորդը Փառնէլ յանցաւոր դատուած
էր յանցանաց ատենին առջեւ: Անգղիա-
նան ազատական կուսակցութիւնն, որ
միացեալ ջանիւք կը գործէր Իրլանտացւոց
հետ, ստիպեց որ Փառնէլ հրաժարի: Փառ-
նէլ յանձն չառաւ, Եւ կրցաւ իւր կողմն շա-
հիւ բաւական անձինք, որով գտնութիւնն
երկու Իրլանտական երեսփոխանաց
խումբեր յառաջ քրքաւ: Սակայն յաղ-
թութիւնն Փառնէլի հակառակ քանակին

եղաւ ցայժմ. վասն զի Իրաննուացի երես-
փոխանաց միծաղոյն մասն առաւելու-
թեամբ քուէից իրեն նոր առաջնորդ ըն-
տրեց:

Անտրիոյ մէջ այս օրերս վերջնականապէս ընդունուեցաւ եւ կայսեր կողմանէ հաստատուեցաւ օրէնք մը որ Վիեննա մայրաքաղաքին շրջմասին ընդլայնի շատ ընդարձակ մերձակայ տեղեր մէջն առնելով, ասով Վիեննայի ընտկէաց թիւը պիտի աճի իբր կէս միլիոն:

Գաղղիա զբաղած է զվիատորաբար
 իւր մաքսերու ինկոռով. շատ մը նիւթերու
 մաքսերը ըարձրացան նոր օրինոք: Բաց
 աստի՛ ելելմոտից պաշտօնարանն իւր 700
 միլիոն ֆրանքի փոխառութիւն մ'ըրաւ:

የቦላላን ጉላላበ ኮፎት ኪኒ

ՈՒՅՈՐՈՒՄՆԵԿԱՆՆԵՐ

ՏՆՏՆԱԿԱՆ — Կոստանդինուպոլիս եւ Տփղիս. 1:
ՄԱՏՆԱԳՐԱԿԱՆ — Ստոյն-Կալիսթենեսյա (Pseudo-
Callisthenes) վարուց Աղեքսանդրի ուսումնասի-
րութիւնը. 5:

ԳՐԱԿԱՆ — Հայերէն ժողովրդի վիճակի կայսե-

Քաղկան զքատան . 11:
ՊԱՏՄԱԿԱՆ — Պատմութիւն Պոլսոյնայի եւ Մոլ-

տաւիոյ հայ զառթականութեան. 17:
ԲԱՆԱՍՏԵՂԺԱԿԱՆ — Մարգարէ. 21: — Զմեռ. 22:
(Պատկերաւ:)

ԱՐՈՒԷՍՏԳԻՏԱԿԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ — Հեռաձայն եւ փոքրաձայն. 23:
(Պատկերապ):

ԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՆՐԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ — Պաթումի եւ Կարսի ընական հարստութիւնը. 24: — Վոսպորի երկաթուղեաց կամուրջը. 24: — Արեւադարձային երկիրներ առաքուող գարեջրոց ապականելուն պատճառը. 24: — Նեղոսի վրայ շոք կապուող մը. 24:

ԲԵՐՈՑԵԼՆԵ

ՋՌԻԱՐՃԱԼԻՔ — Սպանիայի Մաւրիտանացոց ժամանակէն ՋՐՈՅՑ ՄԸ, 25:

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ՆՈՐԱԼՈՒԻԲ — Հեռաձայն առանց ելեկտրականու-
թեան. 30: — Մարմոր թափելու արուեստը. 30:
— Ժանտառենդի դարման. 30:

ՏՆՏԵՍԱԿԱՆ — Կոկորդի ցաւոց պատմաւոյ. 30: —
Ակալուոյ ողի. 31:

ՄԱՆՐԱՎՈՒԹՅՈՒՆ — Միացեալ-Նահանգաց քննակիւնք. 31: Հրապառ քոյն. 31: — Պանրի մանրածօնեքն. 31: — Լոյստոնի մծծութիւնը. 31: — Ո՛ւր կ'երթան գնդաստղները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 32:

ՀԱՍՏԱՄԱՆԻՉ ԵՒ ՊԱՏԱՄԻՄԱՏՈՒ ԽՐԱՊԱԳԻՐ

3. ԲԱՓԱՅԷԼ 4. ՊԱՐՈՆՉ

Վ. Ի. Է. Ն. Ն. Ա. Մ. Խ. Բ. Ա. Բ. Ա. Ն. Ս. Գ. Ա. Բ. Ա. Ն.